ՀՀ, ք. Երևան, 0009, Տերյան փ. 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, 204 սենյակ
Հեռ: +374 10 514 315, ֆաքս: +374 10 514 317, էլ. փոստ: aspired@engl.com

Արարատյան դաշտի ընտրված ձկնաբուծական տնտեսություններում ավտոմատ կառավարման կենտրոնացված, առցանց համակարգի սարքավորումների գնում և տեղադրում

Հայտատուների համար ուղեցույց

ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ.

1) Ի պատասխան հրավերի, առաջարկներ կարող են ներկայացնել տեղական կազմակերպությունները, այդ թվում՝ մասնավոր, խորհրդատվական, գիտահետազոտական, կամ դրանց կոնսորցիումները:
2) Մրցույթին մասնակցող կազմակերպությունները պետք է գրանցված լինեն Հայաստանի Հանրապետությունում և պետք է համապատասխանեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորում ստանալու պահանջներին:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ.

1) Առաջարկը պետք է ստորագրված լինի հայտատուի լիազոր ներկայացուցչի կողմից, կնքված լինի հայտատուի պաշտոնական կնիքով և դրված լինի փակ ծրարի մեջ, որի վրա պետք է նշված լինի հայտատու կազմակերպության անվանումը և «**Արարատյան դաշտի ընտրված ձկնաբուծական տնտեսություններում ավտոմատ կառավարման կենտրոնացված, առցանց համակարգի սարքավորումներ**» բառերը:

2) Առաջարկով ծրարը՝ կնքված, պետք է հասցեագրված լինի ԱՄՆ ՄԶԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳԱՏՕ) ծրագրի ղեկավարին՝ և ներկայացվի ՀՀ, ք. Երևան 0009, Տերյան փողոց 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, սենյակ 204 հասցեով մինչև 2017թ. նոյեմբերի 17-ը, ժամը 16:00-ը: Առաջարկները պետք է ներկայացվեն հայերենով:

ԱՌԱՋԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.

- **«Սարքավորումների նկարագրություն».** Հայտատուն պետք է ներկայացնի առաջարկվող սարքավորումների մակնիշը, արտադրության երկիրը, տեխնիկական մասնագրերը, ընտրված ձկնաբուծարաններում դրանք տեղադրելու աշխատանքների նկարագրությունը և սարքավորումների երաշխիքային սպասարկման պայմանները:
- **«Ժամանակացույց».** Հայտատուն պետք է ներկայացնի աշխատանքների կատարման ժամկետները:
- **«Գնառաջարկ».** Հայտատուն պետք է ներկայացնի առաջադրանքի իրականացման բյուջեն՝ գնահատելով աշխատանքների կատարման ամբողջական ծախսերը: Բոլոր տեսակի ծախսերը պետք է ներկայացվեն ըստ ստորև ներկայացված բյուջետային տողերի՝ հնարավորինս մանրամասն.

Անվանում.	Չափման միավոր	Քանակ	Միավորի արժեք	Ընդամենը
Սարքավորումներ և նյութեր (մանրամասն) - ավտոմատ հոսքաչափեր - տվյալներ գրանցող սարքավորումներ - այլ				
Պատասխանատու տեխնիկական անձնակազմ				
Դաշտային աշխատանքներ				
Ճանապարհածախս				
Վարչական և վերադիր ծախսեր				
Ընդամենը				

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ԳԱՏՕ ծրագիրն ազատված է ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ), հետևաբար, գները պետք է ներկայացվեն առանց ԱԱՀ-ի:

Հայտատուներից հարցերը կնդունվեն են մինչև 2017թ. նոյեմբերի 9-ը, ժամը 16:00-ը: Դրանք պետք է ներկայացվեն ԳԱՏՕ ծրագրի ղեկավարին aspired@engl.com էլեկտրոնային հասցեով: Հարցերի պատասխանները կուղարկվեն բոլոր հայտատուներին նոյեմբերի 9-ից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում: Այս մրցույթի կապակցությամբ հեռախոսա-զանգեր չեն ընդունվում:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ԲԱՑՈՒՄ.

Փաթեթների բացումը տեղի կունենա 2017թ. նոյեմբերի 17-ին, ժամը 16:30-ին ԳԱՏՕ ծրագրի գրասենյակում՝ հայտատուների, ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչների ներկայությամբ: ԳԱՏՕ ծրագրի ներկայացուցիչը կստուգի յուրաքանչյուր փաթեթի համապատասխանությունը այս փաստաթղթում ներկայացված պահանջներին: Հայտերը, որոնք չեն համապատասխանի այդ պահանջներին, կվերադարձվեն համապատասխան հայտատուներին և կհանվեն մրցույթից:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.

Կստեղծվի ներկայացված առաջարկները գնահատող հանձնաժողով՝ ԳԱՏՕ ծրագրի և ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ: Այն կուսումնասիրի և կգնահատի առաջարկները, հաշվի առնելով առաջարկված սարքավորումների տեխնիկական մասնագրերը, աշխատանքների կատարման ժամանակացույցը և գինը:

«Մենդեզ Ինգլանդ ընդ Ասսոսիեթս»-ի հայաստանյան մասնաճյուղն իրավասու է մերժելու ցանկացած կամ բոլոր ստացված առաջարկները: